# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 09/21

ք. Գյումրի «03» մայիսի 2021թ.

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Բ. Ահարոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Հակոբյան-Կարապետյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Սուրեն Կարապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են __10__ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __20__ օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 307 040 /երեք հարյուր յոթ հազար քառասուն/ ՀՀ դրամ:
Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ___2___ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___2___ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

*[20] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

«Գյումրու թիվ 4 արհեստագործական
պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 9002180005872950
Գյումրու գանձապետական բաժանմունք

____________________
ստորագրություն)
Տնօրեն՝ Ք. Ահարոնյան
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Հակոբյան-Կարապետյան» ՍՊԸ

ք. Գյումրի Ռուսթավելու 22
ՀՎՀՀ 05537512
Հ/Հ 163128019631
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Գյումրու մ/6

____________________
(ստորագրություն)
Տնօրեն՝ Ա. Կարապետյան
Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« 03» մայիսի 2021 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 09/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| համարը | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | | | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակն ըստ ամիսների | | | | |
| | | | | | | | | | | 5 | 8 | 10 | 11 |
| | | **Մաքրող և փայլեցնող արտադրանք** | | | | | | | | | | | |
| 1 | 39831241 | Օճառ 100գ | Ձեռքի օճառ «Սովորական» տեսակի, հակաբակտերիալ ազդեցությամբ: | հատ | 190 | 10450 | 55 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 15 | 30 | 10 |
| 2 | 39831245 | Օճառ հեղուկ 5լ | Ձեռքի հեղուկ օճառ 5լ: Մանրեազերծող, ախտահանող օճառ, հակաալերգիկ, Aromalux | հատ | 2500 | 15000 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 4 | | 2 | |
| 3 | 39831245 | Օճառ սանհանգույցի 50գր /4 հատ/ | > 30% անիոնային ՄԱՆ, 5-15% ոչ անիոնային ՄԱՆ, <5% ակտիվ քլոր պարունակող բաղադրիչ (սպիտակեցում), նատրիումի ցիտրատ, նատրիումի սուլֆատ, նատրիումի կարբոնատ, օծանելիք, ներկ.: 50գ 4-ը 1-ում, | հավաք. | 600 | 8400 | 14 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 12 | | | 2 |
| 4 | 39831210 | Հեղուկ լվացող 450մլ | Սպասք լվացող հեղուկ 450մլ: Մածուցիկ հեղուկ ցանկացած տիպի հետքեր մաքրելու համար: | հատ | 520 | 9880 | 19 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 10 | 5 | 4 | |
| 5 | 39831240 | Մաքրող փոշի 475գ /Comet/ | Մաքրող փոշի,սպիտակեցնող, ախտահանող, ժանգ հեռացնող միջոց, բաղադրությունը՝ անիոնային ՄԱՆ, քլոր պարունակող սպիտակեցնող նյութեր, բուրանյութեր, դեզինֆեկտանտներ: | հատ | 540 | 5400 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 10 | |
| 6 | 39831247 | Մաքրող միջոց 1լ /Domestos/ | Սան հանգույցը մաքրող գել մանրէազերծող, սպիտակեցնող, ախտահանող, ժանգ հեռացնող միջոց 1լ | հատ | 930 | 18600 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 5 | | 15 |
| 7 | 39831243 | Լվացքի փոշի Dosia400գր | Լվացքի փոշի Dosia 400գր | հատ | 280 | 560 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 2 | |
| 8 | 39836000 | Ավել /երկ.85-90 սմ, լայն.35-40սմ/ | Հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում 350-500 գրամ, երկարությունը 85-90 սմ, ավլող մասի լայնքը 35-40սմ | հատ | 1000 | 5000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 5 | |
| 9 | 39831283 | Շոր հատակի 50x70սմ | Հատակ լվանալու շոր, 50x70սմ | հատ | 330 | 3300 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 10 | | | |
| 10 | 39831283 | Շոր հատակի 50x80սմ | Հատակ լվանալու շոր, 50x80սմ, միկրոֆիբրա | հատ | 1100 | 3300 | 3 | ք. Գյումրի Անի թ. | | 1 | | | 2 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | 11փ 5/2 | | | | | |
| 11 | 39835000 | Հատակի խոզանակ գոգաթիակով | խոզանակ գոգաթիակով պլասմասե | հավաք. | 1800 | 3600 | 2 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | | | |
| 12 | 39831240 | Ժավել 1լ | Մաքրող, լվացող, սպիտակեցնող, աղտահանող, հեղուկ միջոց 1լ | հատ | 200 | 5400 | 27 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 20 | 5 | | 2 |
| 13 | 39811100 | Օդաթարմեցուցիչ 300մլ | Օդաթարմեցուցիչ 300մլ, 3-ը 1-ում: Բաղադրությունը բուտան, պրոպան, ջուր, էմուլգատոր, բուրանյութ: Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային բալոնիկով: | հատ | 400 | 4000 | 10 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 5 | | | 5 |
| 14 | 39831281 | Կտոր 40x40սմ /վաֆլե, ապակի մաքրող/ | Կտոր 40x40սմ /վաֆլե, ապակի մաքրող/ ՀՀ արտադրության Armspamgo | հատ | 330 | 3300 | 10 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | 3 | | 5 |
| 15 | 39831282 | Լաթ /40սմX40սմ/ | Բամբակյա, 40սմX40սմ | հատ | 180 | 1800 | 10 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 10 | | | |
| 16 | 39831280 | Ապակու հեղուկ 550մլ | Ապակու հեղուկ 550մլ | հատ | 300 | 900 | 3 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | 2 | | |
| | | **Ընդամենը** | | | | **98890** | | | | | | | |
| | | | **Կահավորանք** | | | | | | | | | | |
| 17 | 39221490 | Սպունգ Vileda | Սպունգ խոհանոցային պրոֆիլացված: Սպասք լվանալու միջոց վրան ամրացված հատուկ մաքրող բյուրեղներով շերտ Vileda | հատ | 240 | 2400 | 10 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 10 | |
| 18 | 39221420 | Խոզանակ ձողափայտով 3մ | Խոզանակ ձողափայտով 3մ | հատ | 2500 | 5000 | 2 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | | 1 |
| 19 | 39221280 | Աման /չժանգոտվող մետաղից/ | Աման չժանգոտվող մետաղ, տրամագիծը՝ 10սմ | հատ | 700 | 2100 | 3 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 3 | | | |
| 20 | 39224380 | Կրակայրիչ | Գազով լիցքավորված փոքր այրիչ, բռնկումը՝ էլեկտրական, սնուցումը մարտկոցով | հատ | 200 | 1200 | 6 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 3 | | 3 | |
| 21 | 39224410 | Հեղուկ գազ 100 մլ | Պլաստմասայից տարա, լցված հեղուկ գազով, կրակայրիչը լիցքավորելու համար, 300 մլ Անգույն, անհոտ, այրվող գազ է, հալման ջերմաստիճանը՝ -187, 7°C, եռմանը՝ -42, 1° C: | հատ | 130 | 1300 | 10 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | | 10 |
| 22 | 39224560 | Փայլաթիթեղ | Հաստ.15մկմ, լայն. 30սմ, երկար. 10մ ՀՀ արտադրության | հատ | 480 | 960 | 2 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | | | |
| 23 | 39221230 | Հարթակ պլաստմասե | Հարթակ պլաստմասե 30*40սմ | հատ | 1300 | 1300 | 1 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | | |
| 24 | 39221230 | Գրտնակ | Խմորը գլորելու համար,տրամագիծ 6սմ, երկարությունը 25 սմ, նյութը փայտ | հատ | 1500 | 1500 | 1 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | | |
| 25 | 39221230 | Մկրատ հավի | Սայրի նյութ չժանգոտվող պողպատ բռնակների նյութը պլաստիկ, ամբողջ երկարություն 24 սմ | հատ | 2500 | 2500 | 1 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | | |
| 26 | 39224341 | Աղբաման | Մետաղյա, ոտնակով ծավալը 12լ | հատ | 10000 | 10000 | 1 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | | |
| 27 | 39224341 | Աղբաման սիֆիկոնե | Աղբաման սիֆիկոնե, որը ամրացվում է սեղանին աշխատանքը արագացնելու համար | հատ | 600 | 600 | 1 | բ. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | | |
| | | **Ընդամենը** | | | | **28860** | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Հատուկ հագուստ և պարագաներ** | | | | | | | | | | | |
| 28 | 18421140 | Ձեռնոց ռեռինե | Ձեռնոց ռեզինե, նախատեսված ապակու, սանհանգույցի, բոլոր աշխատանքների մաքրման համար | զույգ | 290 | 5800 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 10 | | | 10 |
| | | **Ընդամենը** | | | | **5800** | | | | | | | |
| | | **Մասնագիտական հագուստ , պարագաներ** | | | | | | | | | | | |
| 29 | 18110000 | Գոգնոց | Գոգնոց խոհարարի | հատ | 2000 | 6000 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 3 | | | |
| | | **Ընդամենը** | | | | **6000** | | | | | | | |
| | | **Առարկաներ կտորից** | | | | | | | | | | | |
| 30 | 39531500 | Գորգ հատակի նախամուտքի 45x75. 5x7մմ | Գորգ հատակի նախամուտքի 45x75. 5x7մմ | հատ | 1300 | 1300 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 1 | |
| 31 | 39514200 | Թեյի սրբիչ 70սմ-30սմ | Բամբակյա, 70սմ-30սմ | հատ | 420 | 4200 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 5 | | | 5 |
| | | **Ընդամենը** | | | | **5500** | | | | | | | |
| | | **Անձնական խնամքի պարագաներ** | | | | | | | | | | | |
| 32 | 33761300 | Սրբիչ զուգարանի 168X208մմ /երկշերտ 150հատ/ | Սրբիչ անձեռոցիկ, 168X208մմ, 150 հատ երկշերտ | հատ | 700 | 18900 | 27 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 25 | 2 | | |
| 33 | 33761100 | Թուղթ հիգենիկ 150մ | Զուգարանի թուղթ 150մետր | հատ | 820 | 36900 | 45 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 15 | 10 | 20 | |
| 34 | 33761100 | Թուղթ հիգենիկ 65մ | Զուգարանի թուղթ 65 մետր Ուկրաինա Օբոլոնվ | հատ | 120 | 42000 | 350 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 100 | 99 | 101 | 50 |
| 35 | 33761400 | Անձեռոցիկ /200հատ/ կլեոպատրա | Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, տարբեր չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ. խոնավությունը՝ 7,0 %, 200 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշման | տուփ | 300 | 24000 | 80 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 40 | 20 | | 20 |
| | | **Ընդամենը** | | | | **121800** | | | | | | | |
| | | **Պոլիէթիլենային տոպրակներ, պարկ** | | | | | | | | | | | |
| 36 | 19642000 | Մննդի պոլիէթիլեն 30մ | Մննդի պոլիէթիլեն 30մ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեք | հատ | 510 | 1020 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 2 | | |
| 37 | 19641000 | Պարկ աղբի /35լ, 50հատ/ Stella | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեք: /35լ, 50հատ/ Stella | հատ | 620 | 18600 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 20 | | | 10 |
| 38 | 19641000 | Պարկ աղբի /120լ, 10հատ/ | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեք: /120լ, 10հատ/ Stella | հատ | 1050 | 15750 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 5 | | 10 | |
| 39 | 19640000 | Տոպրակ պոլիէթիլենային | Տոպրակ պոլիէթիլենային 8*12սմ ZIP ըստ | հատ | 30 | 1500 | 50 | ք. Գյումրի Անի թ. | | 20 | 30 | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 8*12սմ ZIP | ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեք | | | | | 11փ 5/2 | | | | | |
| | | **Ընդամենը** | | | | **36870** | | | | | | | |
| | | **Գրասենյակային նյութեր** | | | | | | | | | | | |
| 40 | 30199130 | Ցուցաթուղթ 16մ | Խմորային պատրաստումների տակ փռվող թուղթ: Ցուցաթուղթ 16մ | հատ | 360 | 720 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | | | |
| | | **Ընդամենը** | | | | **720** | | | | | | | |
| | | **Դեղագործական արտադրանք** | | | | | | | | | | | |
| 41 | 33691846 | Կիտրոնաթթու 30գր | Սպիտակ բյուրեղային նյութ, օգտագործվում է ոսկերչական իրերի լվացման համար, քաշը՝ 30գ | փաթեթ | 100 | 2000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 10 | 10 | | |
| | | **Ընդամենը** | | | | **2000** | | | | | | | |
| | | **Համեմունքներ և ամոքանքներ** | | | | | | | | | | | |
| 42 | 15871200 | Քացախ 12% 0,5լ | 12%-անոց քացախի լուծույթ | հատ | 200 | 400 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | | | |
| 43 | 15872600 | Սոդա /500գր/ | Նատրիումի կարբոնատ տուփի մեջ 500գ | տուփ | 200 | 200 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | | |
| | | **Ընդամենը** | | | | **600** | | | | | | | |
| | | **Ընդամենը** | | | | **307040** | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 900218000587295O
Գյումրու գանձապետական բաժանմունք

_____________________
(ստորագրություն)
Տնօրեն՝ Բ. Ահարոնյան
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Հակոբյան-Կարապետյան» ՍՊԸ

ք. Գյումրի Ռուսթավելու 22
ՀՎՀՀ 05537512
Հ/Հ 163128019631
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Գյումրու մ/6

_____________________
(ստորագրություն)
Տնօրեն՝ Ս.Կարապետյան
Կ.Տ.

Հավելված N 2
« 03» մայիսի 2021 թ. կնքված
ԳՈԻ4-ՄԱ-ԱՊՁԲ 09/21 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| համարը | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | Փետրվար մարտ | Մարտ մայիս | Ապրիլ հունիս | Մայիս հուլիս | Հունիս օգոստոս | հուլիս սեպտեմբեր | օգոստոս հոկտեմբեր | Սեպտեմբեր նոյեմբեր | Հոկտեմբեր դեկտեմբեր | Նոյեմբեր դեկտեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1-16 | **39800000** | **Մաքրող և փայլեցնող արտադրանք** | | | | | 39160 | 39160 | 39160 | 51850 | 51850 | 75590 | 98890 | 98890 | 98890 |
| 17-27 | **39200000** | **Կահավորանք** | | | | | 22060 | 22060 | 22060 | 22060 | 22060 | 25060 | 28860 | 28860 | 28860 |
| 28 | **18421140** | **Հատուկ հագուստ և պարագաներ** | | | | | 2900 | 2900 | 2900 | 2900 | 2900 | 5800 | 5800 | 5800 | 5800 |
| 29 | **18141100** | **Մասնագիտական հագուստ , պարագաներ** | | | | | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 30-31 | **39500000** | **Առարկաներ կտորից** | | | | | 2100 | 2100 | 2100 | 2100 | 2100 | 3400 | 5500 | 5500 | 5500 |
| 32-35 | **33700000** | **Անձնական խնամքի պարագաներ** | | | | | 53800 | 53800 | 53800 | 81280 | 81280 | 109800 | 121800 | 121800 | 121800 |
| 36-39 | 19642000 | **Պոլիէթիլենային փոպրակներ, պարկ** | | | | | 18250 | 18250 | 18250 | 20170 | 20170 | 30670 | 36870 | 36870 | 36870 |
| 40 | 30190000 | **Գրասենյակային նյութեր** | | | | | 720 | 720 | 720 | 720 | 720 | 720 | 720 | 720 | 720 |
| 41 | 33600000 | **Դեղագործական արտադրանք** | | | | | 1000 | 1000 | 1000 | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 42-43 | 15870000 | **Համեմունքներ և ամոքանքներ** | | | | | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 | 600 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 900218000587295О
Գյումրու գանձապետական բաժանմունք

-------------------------
(ստորագրություն)
Տնօրեն՝ Ք. Ահարոնյան
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Հակոբյան-Կարապետյան» ՍՊԸ
ք. Գյումրի Ռուսթավելու 22
ՀՎՀՀ 05537512
Հ/Հ 163128019631
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Գյումրու Մ/Ճ

-------------------------
(ստորագրություն)
Տնօրեն՝ Ս.Կարապետյան
Կ.Տ.

Հավելված N 3
« 03» մայիսի 2021 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 09/21 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« 03» մայիսի 2021 թ. կնքված*
*ԳՈՒՀ-ՄԱ-ԱՊՁԲ 09/21 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը / Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _______________________-ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը / պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 3*
*«03» մայիսի 2021 թ. կնքված*
*ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 09/21 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
«Հակոբյան-Կարապետյան»ՍՊԸ
ք. Գյումրի Ռուսթավելու 22
հհ163128019631
«Հայէկոնոմբանկ»ԲԲԸ
Գյումրու մ/ճ
հվհհ05537512
տնօրեն՝
Ս.Կարապետյան

Պատվիրատու
«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
հհ900218000587295O
Գյումրիիգանձապետականբաժանմունք
Հվհհ05536355
Տնօրեն՝
Ք. Ահարոնյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«06»«մայիսի» 2021թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «03» «մայիսի» 2021թ.
Պայմանագրիհամարը՝ ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ09/21
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով «06» «մայիսի» 2021թ. դուրս գրված N Բ9029034996 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1. | Օճառ հեղուկ 5լ | Ձեռքի հեղուկ օճառ 5լ: Մանրեազերծող, ախտահանող օճառ, հակաալերգիկ | 4 | 4 | 31.05.21թ | 06.05.21 | 10,00 | 31.08.21 |
| 2. | Օճառ սանհանգույցի 50գր /4 հատ/ | > 30% անիոնային ՄԱՆ, 5-15% ոչ անիոնային ՄԱՆ, <5% ակտիվ քլոր պարունակող բաղադրիչ (սպիտակեցում), նատրիումի ցիտրատ, նատրիումի սուլֆատ, նատրիումի կարբոնատ, օծանելիք, ներկանյութ: 50գ 4-ը 1-ում, | 12 | 12 | 31.05.21թ | 06.05.21 | 7,20 | 31.08.21 |
| 3. | Հեղուկ լվացող 450մլ | Սպասք լվացող հեղուկ 450մլ: Մածուցիկ հեղուկ ցանկացած տիպի հետքեր մաքրելու համար: | 10 | 10 | 31.05.21թ | 06.05.21 | 5,20 | 31.08.21 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | Ձեռնոց ռետինե | Տնտեսական ձեռնոցներ, ռետինից միջին չափսի /M/, հաստությունը՝ առնվազն 0.9մմ, ամուր, 100% բնական լատեքսից: | 10 | 10 | 31.05.21թ | 06.05.21 | 2,9 | 31.08.21 |
| 5. | Շոր հատակի 50x70սմ Aromalux | Հատակ լվանալու շոր, 50x70սմ | 10 | 10 | 31.05.21թ | 06.05.21 | 3,30 | 31.08.21 |
| 6. | Շոր հատակի 50x80սմ | Հատակ լվանալու շոր, 50x80սմ, միկրոֆիբրա | 1 | 1 | 31.05.21թ | 06.05.21 | 1,10 | 31.08.21 |
| 7. | Հատակի խոզանակ գոգաթիակով | Խոզանակ գոգաթիակով պլասմասե | 2 | 2 | 31.05.21թ | 06.05.21 | 3,60 | 31.08.21 |
| 8. | Ժավել 1լ | Մաքրող, լվացող, սպիտակեցնող, աղտահանող, հեղուկ միջոց 1լ | 20 | 20 | 31.05.21թ | 06.05.21 | 4,00 | 31.08.21 |
| 9. | Օդաթարմեցուցիչ 300մլ | Օդաթարմեցուցիչ 300մլ, 3-ը 1-ում: Բաղադրությունը բուտան, պրոպան, ջուր, էմուլգատոր, բուրանյութ: Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային բալոնիկով: | 5 | 5 | 31.05.21թ | 06.05.21 | 2,00 | 31.08.21 |
| 10. | Կտոր 40x40սմ /վաֆլե, ապակի մաքրող/ | Կտոր 40x40սմ /վաֆլե, ապակի մաքրող/ | 2 | 2 | 31.05.21թ | 06.05.21 | 0,66 | 31.08.21 |
| 11. | Սրբիչ զուգարանի 168X208մմ /երկշերտ 150հատ/ | Սրբիչ անձեռոցիկ, 168X208մմ, 150 հատ երկշերտ | 25 | 25 | 31.05.21թ | 06.05.21 | 17,50 | 31.08.21 |
| 12. | Թուղթ հիգենիկ 150մ | Զուգարանի թուղթ 150մետր | 15 | 15 | 31.05.21թ | 06.05.21 | 12,30 | 31.08.21 |
| 13. | Թուղթ հիգենիկ 65մ | Զուգարանի թուղթ 65 մետր Ուկրաինա Օբուխով | 100 | 100 | 31.05.21թ | 06.05.21 | 12,00 | 31.08.21 |
| 14. | Լաթ /40սմX40սմ/ | Բամբակյա, 40սմX40սմ | 10 | 10 | 31.05.21թ | 06.05.21 | 1,80 | 31.08.21 |
| 15. | Անձեռոցիկ /200հատ/ կլեոպատրա | Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, տարբեր չափերի, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 200 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշման: | 40 | 40 | 31.05.21թ | 06.05.21 | 12,00 | 31.08.21 |
| 16. | Պարկ աղբի /35լ, 50հատ/ Stella | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեք: /35լ, 50հատ/ Stella | 20 | 20 | 31.05.21թ | 06.05.21 | 12,40 | 31.08.21 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17. | Պարկ աղբի /120լ, 10հատ/ | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեք։ /120լ, 10հատ/ Stella | 5 | 5 | 31.05.21թ | 06.05.21 | 5,25 | 31.08.21 |
| 18. | Ապակու հեղուկ 550մլ Միստր ջին | Ապակու հեղուկ 550մլ Միստր ջին ՀՀ արտադրություն | 1 | 1 | 31.05.21թ | 06.05.21 | 0,30 | 31.08.21 |
| 19. | Տոպրակ պոլիէթիլենային 8*12սմ ZIP | Տոպրակ պոլիէթիլենային 8*12սմ ZIP ըստ ԳՕՍՏ 10354-82 կամ համարժեք | 20 | 20 | 31.05.21թ | 06.05.21 | 0,60 | 31.08.21 |
| 20. | Խոզանակ ծողափայտով 3մ | Խոզանակ ծողափայտով 3մ | 1 | 1 | 31.05.21թ | 06.05.21 | 2,50 | 31.08.21 |
| 21. | Աման /չժանգոտվող մետաղից/ | Աման չժանգոտվող մետաղ, տրամագիծը՝ 10սմ | 3 | 3 | 31.05.21թ | 06.05.21 | 2,10 | 31.08.21 |
| 22. | Կրակայրիչ | Գազով լիցքավորված փոքր այրիչ, բռնկումը՝ էլեկտրական, սնուցումը մարտկոցով | 3 | 3 | 31.05.21թ | 06.05.21 | 0,60 | 31.08.21 |
| 23. | Փայլաթիթեղ /հաստ. 15մկմ, լայն 30սմ, երկար 10մ/ | Փայլաթիթեղ /հաստ. 15մկմ, լայն 30սմ, երկար 10մ/ | 2 | 2 | 31.05.21թ | 06.05.21 | 0,96 | 31.08.21 |
| 24. | Թեյի սրբիչ 70սմ-30սմ | Բամբակյա, 70սմ-30սմ | 5 | 5 | 31.05.21թ | 06.05.21 | 2,10 | 31.08.21 |
| 25. | Քացախ 12% 0,5լ | 12%-անոց քացախի լուծույթ | 2 | 2 | 31.05.21թ | 06.05.21 | 0,40 | 31.08.21 |
| 26. | Յուղաթուղթ 16մ | Խմորային պատրաստումների տակ փռվող թուղթ։ Յուղաթուղթ 16մ | 2 | 2 | 31.05.21թ | 06.05.21 | 0,72 | 31.08.21 |
| 27. | Հարթակ պլաստմասե | Հարթակ պլաստմասե 30*40սմ | 1 | 1 | 31.05.21թ | 06.05.21 | 1,30 | 31.08.21 |
| 28. | Գրտնակ | Խմորը գլորելու համար,տրամագիծ 6սմ, երկարությունը 25 սմ, նյութը փայտ | 1 | 1 | 31.05.21թ | 06.05.21 | 1,50 | 31.08.21 |
| 29. | Մկրատ հավի | Սայրի նյութ չժանգոտվող պողպատ բռնակների նյութը պլաստիկ,ամբողջ երկարություն 24 սմ | 1 | 1 | 31.05.21թ | 06.05.21 | 2,50 | 31.08.21 |
| 30. | Աղբաման | Մետաղյա, ոտնակով ծավալը 12լ | 1 | 1 | 31.05.21թ | 06.05.21 | 8,80 | 31.08.21 |
| 31. | Աղբաման սիլիկոնե | Աղբաման սիլիկոնե, որը ամրացվում է սեղանին աշխատանքը արագացնելու համար | 3 | 3 | 31.05.21թ | 06.05.21 | 1,80 | 31.08.21 |
| 32. | Գոգնոց | Գոգնոց խոհարարի | 3 | 3 | 31.05.21թ | 06.05.21 | 6,00 | 31.08.21 |
| 33. | Կիտրոնաթթու 30գր | Սպիտակ բյուրեղային նյութ, օգտագործվում է ոսկերչական իրերի լվացման համար, քաշը՝30գ | 10 | 10 | 31.05.21թ | 06.05.21 | 1,00 | 31.08.21 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 34. | Սոդա /500գր/ | Նատրիումի կարբոնատ տուփի մեջ 500գ | 1 | 1 | 31.05.21թ | 06.05.21 | 0,20 | 31.08.21 |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

Ս. Կարապետյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 6 | Մայիս | 2021 թ. | Բ | 9029034996 |

| [4] Առաքման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 6 | Մայիս | 2021 թ. |

Ճշգրտվող հաշիվ վավերագրի

| Սերիա | Համար |
|---|---|
| | |

Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ

| | | |
|---|---|---|
| | | |

Պայմանագիր

| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|
| | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 5 5 3 7 5 1 2 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | «ՀԱԿՈԲՅԱՆ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [11] Բանկային տվյալները | Հայէկոնոմբանկ Գյումրու մ/ճ; N 163128019631 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ Ռուսթավելու 22 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ԳՅՈՒՄՐԻ Ռուսթավելու 22 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 5 5 3 6 3 5 5 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [18] Բանկային տվյալները | Գյումրիի գանձապետական բաժանմունք; N 9002180005872950 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԳՅՈՒՄՐԻ Անի թաղ. 11փ. 5 2 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |

| [21] Ում միջոցով | | |
|---|---|---|
| | Անուն, ազգանուն | |
| Լիազորագիր | Համար | |
| | Ամսաթիվ | |

| | |
|---|---|
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԳՅՈՒՄՐԻ Անի Թաղ. 11 Փող. 5 2 |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Տարա | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Օճառ հեղուկ 5լ | հատ | 4 | 2500 | | 10000 | | | |
| 2 | Օճառ սանհանգույցի 50գր /4 հատ/ | հավաք. | 12 | 600 | | 7200 | | | |
| 3 | Հեղուկ լվացող 450մլ | հատ | 10 | 520 | | 5200 | | | |
| 4 | Ձեռնոց ռետինե VIOR | զույգ | 10 | 290 | | 2900 | | | |
| 5 | Շոր հատակի 50x70սմ Aromalux | հատ | 10 | 330 | | 3300 | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Շոր հատակի 50x80սմ | հատ | 1 | 1100 | | 1100 | | | |
| 7 | Հատակի խոզանակ գոգաթիակով | հավաք. | 2 | 1800 | | 3600 | | | |
| 8 | Ժավել 1լ | հատ | 20 | 200 | | 4000 | | | |
| 9 | Օդաթարմեցուցիչ 300մլ | հատ | 5 | 400 | | 2000 | | | |
| 10 | Կտոր 40x40սմ /վաֆլե, ապակի մաքրող/ | հատ | 2 | 330 | | 660 | | | |
| 11 | Սրբիչ զուգարանի 168X208մմ /երկշերտ 150հատ/ | հատ | 25 | 700 | | 17500 | | | |
| 12 | Թուղթ հիգենիկ 150մ | հատ | 15 | 820 | | 12300 | | | |
| 13 | Թուղթ հիգենիկ 65մ | հատ | 100 | 120 | | 12000 | | | |
| 14 | Լաթ /40սմX40սմ/ | հատ | 10 | 180 | | 1800 | | | |
| 15 | Անձեռոցիկ /200հատ/ կլեռպատրա | տուփ | 40 | 300 | | 12000 | | | |
| 16 | Պարկ աղբի /35լ, 50հատ/ Stella | հատ | 20 | 620 | | 12400 | | | |
| 17 | Պարկ աղբի /120լ, 10հատ/ | հատ | 5 | 1050 | | 5250 | | | |
| 18 | Ապակու հեղուկ 550մլ Միստր ջին | հատ | 1 | 300 | | 300 | | | |
| 19 | Տոպրակ պոլիէթիլենային 8*12սմ ZIP | հատ | 20 | 30 | | 600 | | | |
| 20 | Խոզանակ ձողափայտով 3մ | հատ | 1 | 2500 | | 2500 | | | |
| 21 | Աման /չժանգոտվող մետաղից/ | հատ | 3 | 700 | | 2100 | | | |
| 22 | Կրակայրիչ | հատ | 3 | 200 | | 600 | | | |
| 23 | Փայլաթիթեղ /հաստ. 15մկմ, լայն.30սմ, երկար. 10մ/ | հատ | 2 | 480 | | 960 | | | |
| 24 | Թեյի սրբիչ 70սմ-30սմ | հատ | 5 | 420 | | 2100 | | | |
| 25 | Քացախ 12% 0,5լ | հատ | 2 | 200 | | 400 | | | |
| 26 | Յուղաթուղթ 16մ | հատ | 2 | 360 | | 720 | | | |
| 27 | Հարթակ պլաստմասե | հատ | 1 | 1300 | | 1300 | | | |
| 28 | Գրտնակ | հատ | 1 | 1500 | | 1500 | | | |
| 29 | Մկրատ հավի | հատ | 1 | 2500 | | 2500 | | | |
| 30 | Աղբաման | հատ | 1 | 8800 | | 8800 | | | |
| 31 | Աղբաման սիլիկոնե | հատ | 3 | 600 | | 1800 | | | |
| 32 | Գոգնոց | հատ | 3 | 2000 | | 6000 | | | |
| 33 | Կիտրոնաթթու 30գր | փաթեթ | 10 | 100 | | 1000 | | | |
| 34 | Սոդա /500գր/ | տուփ | 1 | 200 | | 200 | | | |
| Ընդամենը | | | | | | 146590 | X | | |

Առաքող՝ KARAPETYAN SUREN 1801850151
(անունը, ազգանունը)

Ստացող AHARONYAN KNARIK 5708640316
(անունը, ազգանունը)

06/05/2021 11:32:27

06/05/2021 13:20:27